ՀՏԴ 82.09(479.243) *Գրականություն*

Մելինե Սողոմոնյան
ԱրՊՀ, «Հայ գրականության պատմություն»
մագիստրատուրա 2-րդ կուրսի մագիստրանտ

ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐԱԳԻՐ ՆՄՈՒՇՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածի մեջ քննության ենք առել արցախյան գոյապայքարի մասին ժողովրդական մտածողության մեջ տեղ գտած բանահյուսական նմուշները: Աշխատանքը կատարել ենք վերլուծական, համադրական, համեմատական մեթոդներով:Բացահայտել ենք արցախցու աշխարհընկալման յուրօրինակ դրսևորումները արցախյան գոյապայքարի շուրջ:
Բանահյուսական տարբեր նմուշներում թշնամու կերպարը մարմնավորվել է բացասականորեն, այդ են վկայում տարբեր ժանրատեսակներում տեղ գտած նմուշները:
Բավականին հետաքրքիր և ուշադրության արժանի են արցախցու մտորումներն անհաղորդ աշխարհի կեղծ քաղաքականության և երկիր մոլորակի բնակչության մուսուլմանացման գործնթացի շուրջ:

Мелине Согомонян

ТЕМАТИКА АРЦАХСКОГО ОСВОБОДИТЕЛЬНОГО ДВИЖЕНИЯ В ОБРАЗЦАХ ФОЛЬКЛОРНОЙ НОВИНКИ.

В этой статье мы рассмотрели фольклорные образцы народного мышления о освободительной борьбе Арцаха, проделали свою работу с аналитическими, сопоставительными, сравнительными методами, обнаружили уникальные проявления восприятия мира арцахцами вокруг освободительной борьбы Арцаха. Очень интересно и достойно внимания услышать идеи арцахцев о ложной политике непричастного мира и превращения населения нашей планеты мусульманским.
В различных образцах фольклора образ противника был воплощен отрицательным образом, о чем свидетельствуют образцы, найденные в различных жанрах.

Meline Soghomonyan

ARTSAKH LIBERATION MOVEMENT IN THE NOVEL SAMPLES OF FOLKLORE.

In the article we have examined folklore samples of folk thinking about the Artsakh liberation movement. Analytical, comparative, comparative methods are used. The unique manifestations of the Artsakh people's perception of the Artsakh liberation movement are discovered. In various folklore samples, the image of the enemy was embodied negatively, proved by the samples found in different genres. It is quite interesting to hear the thoughts of the people of Artsakh about the fraudulent policy of the world and the muslimization of the population of the Earth.

20-րդ դարավերջին՝ արցախյան գոյապայքարի ողբերգահերոսական տարիներին, բանահյուսական ինքնատիպ նմուշներ ստեղծվեցին: Այս երևույթի առաջացումն ու դրա հետագա ընթացքը պայմանավորված էր ժողովրդի երևակայական նոր հորիզոնների, վերագտած ազատության արժևորման, երազանքի և իրականության համապատկերում նոր խոսք ասելու անհրաժեշտությամբ: Պատերազմը ժողովուրդներին պարտադրում է ապրել ռազմական կյանքով. «Թօրքը ըստիբում ա, վէր մէր ըստուծէնան հըռանանք, պա տա նըմըրդոթու՞ն չի, տա ամալ կյալի՞ պէն ա»[1], «Կըռէվը էնքան փիս պէնա, վէր վէշմինինն էլ ա օզիլ չի ինի, ամա վէր մէր մին հափուռ վըէղէն ու մին կաթ ճիրին էլ ըն ըշկոնէն տնգալ՝ էս խմորը շատ ճյուրա տընանական»[2]: Սակայն այդօրինակ կյանքի ու իրականության հետ հաշտվելը ոչ միայն կամային ջղաձգություն էր պահանջում, այլև հոգեկան գերլարված կենսակերպ:

Բավականին հետաքրքիր և ուշադրության արժանի են արցախցու մտորումներն անհաղորդ աշխարհի կեղծ քաղաքականության և երկիր մոլորակի բնակչության մուսուլմանացման գործնթացի շուրջ, որը վերջին ժամանակներում նոր թափ է ստացել, և սա ոչ միայն սթափեցնող է,

[1] Ռազմելա Սարուխանյան, 1952թ. գ. Իվանյան, թոշակառու ուսուցչուհի:
[2] Վլադիմիր Բալայան, գ. Ռուղտասար, 1942թ. նախկին ճարտարագետ:

այլև վտանգավոր. «Ըշխարքէս փինդէրան պէն չում կլօխ ընգում, համ մէզըն զէնք տամ, համ մուսուլմանէն, պա տահանց ծէրքէն զէնք տինիլիյա՞»[1], «Ուրանց օզածը մինակ մէր վէղէրը չար, օզալըն մէզ հօփ տան՝ մըզէլ մուսուլման սարքին»[2]:

Թշնամու հետ պարտադրված խաղաղության տարիները արցախցու հիշողության մեջ կեղծիքի, ճնշումների, դարանակալ հալածանքի, լարված ու զսպված ժամանակներ էին: Մայր Հայաստանի անքակտելի մասնիկը՝ Արցախը, գտնվում էր կործանման, թուրքացման եզրին. «Ժըղօվուրթը ասալա. «Մարը խուխէն անա ճօկած հունց կարէ ապրէ: Քինիլավ թուլացալընք»[3]: Բայց հայի ապրելու կամքն աներեր էր:

Ազգային սերուցքից զրկված ժողովուրդը երբևէ չի կարողացել հաղթահարել ճակատագրական հարվածների ուժգնությունը: Այս փաստի գիտակցումն է թշնամուն մղել մտավորականության ոչնչացման քաղաքականության: Հերթական բնաջնջման վերահաս վտանգը մղեց պարտադրված ռազմական գործողությունների. «Ուրանք հանց ըրալընն, վէր խէլունքը տյուս կա քինի յիրգիրան, դէ վէր խէլունքը կավէչ, հու բիդի ժուղուվուրթէն աշկէրը պէնա: Հաշէվ ըրա կըլօխը կըտըրէցէն՝ ուղեղը տյուս կալին, ջանը ուրանցը շինիլը հինչա՞»[4], «Էնքան խըէլունք, դյուզյէխա մարթկանց կըլխընէյըն կէրալ, թա հինչա ժուղուվուրթէն ուրանքն նըհաշ տուվալ տահանց սարքած թըլըկնէրէն տըէղը»[5]:

Հայրենյաց շահը անձնականից գերադասելու պահանջը ժամանակաշրջանի ու ազգային բնավորության արդյունք է, գիտակցական հերթական հորիզոնի նվաճում, որ մղում է սեփական ողբերգության մեջ տեսնելու ապագա երջանկությունը. « Մըէր կըլխավն էնքան փիս-փիս պէներ ա ընցալ, ամմա վէշմին վըխտու փուշմընօթուն չիլալ, գիդացալնք վէր նէղ օրէն լէն օրէլ ա ինում[6]»: Մեկ գաղափարի ու նպատակի մարտիկներ էին բոլորը, ազգովի պայքարելու ցանկությունը վերածվել էր իրականության. «Մունք էն ազգընընք, վար կըռվէն վախտը կընէգն ու տըղամարթը տարբերվում չըն, տըղըմարթիք հօղնըն պահում, կընանէքըն էլ տըղըմարթկանց»[7]:

Գազանային վարքագիծը հարաբերվելով ժամանակակից աշխարհին ու քաղաքակրթությանը՝ ոչ մի լուրջ արդյունք չի տվել, այլ ընդամենն անցավ որակական նոր հարթակի՝ հոշոտելու բնածին տաղանդը փոխարինվեց սպանելու քաղաքակիրթ տարբերակով: Ամենաթողությունն ու անարդարությունն էլ լավագույնս նպաստեցին դրանց զարգացման ու ընդլայնման գործընթացին. «Մարտունա շինէրքան մինումը թօրք դասատուն վեց տարեկան հայ խօխայա մօրթալ, պա տի նըմըրդօթուն կընի՞»[8], «Հադրութա գազելը վէննըն ըրալ, մէծ, կուճի, լօխճին կըտօրալ, էրկու հօքիյըն սաղ պրծալ, ինէլ բըխտըրնէն պէրալ ա թօրքէրը տեսալ չըն»[9]:

Լեզուն այն եզակի բարոյական շտեմարանն է, որը չունի իրեն գերազանցող մրցակից: Ազգերն ու հայրենիքները, ժամանակի և տարածության փորձությանը ենթակվելով, հաճախ վերացել են երկրի երեսից, սակայն լեզվի միջոցով ձեռք բերած իմաստնությունները երբևէ կորստյան չեն մատնվել: Թշնամին քաջ գիտակցում էր, որ լեզուն է ձևավորում ազգային դիմագիծ ու հոգեկերտվածք, և հայ լեզուն է հայի ինքնության պահպանման հիմնական գործոնը: Դրա համար էլ առաջնությունը տալիս էր լեզվական ազդեցությամբ ճնշումներին՝ աղրբեջանացմանը՝ փորձելով լեզվի միջոցով նոր տիրույթներ զավթել հայի լեզվամտածողության դաշտում: «Տիլիվիզիրն ու ռադիօն, լօխ թուրքէրէն ա իլալ, գրական լյուզուն մըզէտէ խօրթա իլալ «, «Հու վէր թուրքէրէն գիդայիսա իլալ, նա էլ քէցալա օլիմպյադա»[10]: Ինչպես յուրաքանչյուր շինարար ազգ, այդպես էլ հայության այս հատվածը երազում է հավիտենական անդորրի մասին. «Ըստուծէնան դաչանքում անում էլ կռէվ չինի, վար մէր ժըղօվուրթը ուրան վէղէն յիա դինջ ապրէ»[11]:

---

[1] Նիկոլայ Օսիպյան, գ. Ավետարանոց, 1950թ. նախկին վարորդ:
[2] Լևոն Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության,Ստեփանակերտ, 2011, էջ 242:
[3] Դոնարա Առստամյան, գ. Ավետարանոց, 1964թ. ուսուցչուհի:
[4] Տե՛ս՝ նույնը:
[5] Գևորգ Սարգսյան, 1990թ. ք. Մարտունի, տնտեսագետ:
[6] Վիլսոն Խաչատրյան, 1965թ, ք. Ճարտար:
[7] Նինել Խոնդկարյան, 1963թ. ք. Մարտակերտ, գործավար:
[8] Աշխեն Սարգսյան, 1943թ. ք. Մարտունի, թոշակառու:
[9] Դոնարա Առստամյան, գ. Ավետարանոց, 1964թ. ուսուցչուհի:
[10] Գայանե Անտոնյան, գ. Շոշ, 1969թ. տնային տնտեսուհի:
[11] Ազնիվ Առաքելյան, 1967թ. գ. Կուսապատ, համակարգչային օպերատոր:

Ժամանակի քաղաքական հալածանքների հաղթահարումը մեկ գլխավոր նպատակի էր ծառայում՝ վերականգնել երբեմնի ազատությունն ու ազգային դիմագիծը: Պահը հասունանալով՝ վերածվեց ազգային պահանջի, սակայն ռուսական թուրքամետ իշխանությունների շահերից չէր բխում արցախյան հիմնախնդրին իրավական հարթակում արդարացի լուծում տալը. «Ասումն վէնը կացած ճուրը շուտ կըվէրթնէ, տէնց էլ մէր հարցն ա իլալ, վէշմին ձէվի օգալչըն լուծին, մունք էլ տէմչընք կացալ, մէր դյուզը մինչէվ վէրջ տարալընք, կօգի շատ փիս-փիս պանէր տէսանք»[1]:

Միայն համամարդկային բարձր արժեհամակարգի տեր ժողովուրդը կարող է ևս մեկ անգամ ապավինել քաղաքակիրթ աշխարհին ու հավատալ իրավունքի անձեռնամխելիությանը, այնինչ քաղաքական հարթակում վաղուց դերաբաշխությունը կատարված էր: Ադրբեջանական զավթողականությունը մեծ մասշտաբների էր հասել: Սումգայիթյան ջարդերը վերջնականապես փշրեցին ադրբեջանական դարանակալ քաղաքականության շղթան: Ժողովուրդը գիտակցեց, որ ոչ հեռու անցյալը կրկին վերադառնում է, այս անգամ վերջնականապես ոչնչացնելու մտայնությամբ. «Հույսըրնէս տիրալինք Գարբաչօվէն յիրա, վար էսա հարցը կըլուծէ, ամմա պանից պարզվում ա, վար լօխ ծախված ըն, մունքընք մէր դալուն», «Լյավա մէր ժուղօվուրէը շուտ կըլօխ ընգավ, վար խաղաղությունն էլ բիդի կըռվավ ըշխադինք, թաչնա Նախճէվանա օրը կինար»[2]:

Անհավասարության ու անիրավության հերթական ալիքն ճակատագրական դարձավ համայն հայության համար, չէ որ անհավասարությունը գերմարդ դառնալու հնարավորություն է ընձեռնում: Հիրավի պատմական այս ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունները կարելի է որակել ոչ միայն շրջադարձային, այլև հոգեբանական ու փիլիսոփայական լուրջ ընդգրկումներ ունեցող.«Շատ խէլունք ու մաստուն ազգերըն կուրչիս, բայց մունք մէզ համօզէս ընք, վէր մէր մաչին ա մէր փրկությունը»[3]:

80-ականների ճակատագրական որոշումը սերնդափոխության այս էտապում ընկալվում է իբրև անհրաժեշտությունից ծնված իմաստնություն: Անձնական ցավը կրկին ստորադասվում է հայրենասիրությանը. «Յէս հիշում չում իմ հօր, վէց ըմսեկանում իլալ վէր զօհվալա: Առանց հար մըծանալը շատ փիս պէն ա, դյուզա միշտ զգացալում վէր ինձնհէտա: Յէս ու իմ ախպէր շատ տիժէր օրէրընք տէսալ, բայց վէշմին վըխտու բօղօքալչընք կյանքան, որովհետէվ էտ կյանքէն հէտէյա իմ հար զօհվալ»[4], « Իմ ցավըս պարառ թիթվանում ա, վար մըտածում ինձնման շատէրը կան, շըտէրէն հարէրընըն սօրվա մին հափուռ վէղէն հէտի արուն թափալ, տըրա հէտի յէլ վէղը մըզէտէ սուրփություն ա»[5]:

Արցախյան գոյապայքարը վերստին ապացուցեց , որ թշնամուն առաջին հերթին պետք է հաղթահարել հենց գիտակցական հարթակում: Բանահյուսական տարբեր նմուշներում թշնամու կերպարը մարմնավորվել է բացասականորեն, այդ են վկայում տարբեր ժանրատեսակներում տեղ գտած նմուշները: Առանձնակի ուշադրության են արժանացել զվարճախոսությունները: Լինելով բանահյուսական ամենակենսունակ ժանրերից մեկը՝զվարճախոսություններում ժողովուրդը հնարավորինս ծաղրի սյունին է գամել բարոյականությունից, պատվախնդրությունից զուրկ թշնամու կերպարը: Ճարտարեցի հայտնի զվարճախոս Վաղոն, տեսնելով վրացու և ադրբեջանցու վեճը Արցախն իրենցը դարձնելու վերաբերյալ, ընդհատում է նրանց ասելով, որ ինքնը վարպետ է և պատրաստ է երկուսին էլ ծառայել. «Յէս մըռալու ղութի շինօղ ում, մէռալը ծըզանա, ղութին՝ ինձանա»[6]:

Պատերազմի թոհ ու բոհում արցախցին չի կորցրել սրամտելու իր բնածին ունակությունը: Հազվադեպ դարձած ժպիտն այդ օրերին հետաքրքիր երանգ էր պարգևում գոյապայքարն իրենց կենսակերպը դարձրած մարդկանց: Պատերազմի թեժ պահերից մեկն էր, երբ խրամորթեցիներն իրենց գյուղը պաշտպանելիս թշնամուն մեծ կորուստներ են պատճառում, և երբ թշնամին տասը հոգով գալիս է կռվի դաշտում թողած իր վեց դիակների հետևից, մեր տղաներից մեկը սրամտում է. «Էտ դուզօթուն չի, տասը հօքի կյամըն հինչ անի՞ն հավայի տըէղը, վէր վէց հօքին մարթա մին մէյդ շիլակին տանին, պա էն չօրս հօքին հինչ անին: Յէկէք՝ մին չօրս թօրք էլ ըսպանինք՝, հանցու վէր

[1] Սուսաննա Մարտիրոսյան, 1968թ. գ.Մոխրաթաղ, հաշվապահ:
[2] Նատաշա Պողոսյան, 1958թ, ք. Մարտակերտ, ուսուցչուհի:
[3] Ռամելա Հովհաննիսյան, 1971թ. գ. Քարին տակ:
[4] Արեգա Դանիելյան, 1992թ. ք.Ճարտար, տնային տնտեսուհի:
[5] Ռուզան Առաքելյան, 1991թ, Կուսապատ, ուսուցչուհի:
[6] Ա. Սարգսյան,Արցախյան զվարճախոսություններ, Ստեփանակերտ, 2014,էջ 70:

կ՝ան մարթա մինը շիլակին տանին»[1]: Մեկ այլ զվարճախոսության մեջ թշնամին հանկարծակի հարձակվում է «Մէշուկնէրի պօստ» կոչվող դիրքի վրա և շփոթված հայ երիտասարդը հրամանատարությանը ռադիոկապով հաղորդում է պատահածի մասին ասելով. «Ճէլ ըրէք է, միշուկնէն տարէն»[2]:

Ազգերի և պետությունների կործանման գլխավոր դրդապատճառներից մեկը միջակության բարդույթից ձերբազատվելու հերթական անարդյունք քայլն ու շահից ծնված դավադրությունն է: Ժողովուրդն ունի այդպիսիններին որակելու իր յուրօրինակ եղանակները: Ոչ երանի նրանց, ովքեր զրկված են ժողովրդական հարգանքից ու սիրուց. «Հայ կա թօրքա բէթար ա: Գիդումըս, վէր թօրքան բիդի սայաղ կէնաս, ամմա վէր հայն ա դուշմընօթուն անում, ասումս տինը ծընված չի բիդար: Մըղափուն չըն էն ջահիլ խօխէքը վէր հայու ծէրքավ քէցէն»[3]:

Արցախյան գոյամարտի թեմատիկան արտացոլող մի շարք ավանդություններ են ստեղծվել: Այսօր էլ արցախյան գոյամարտի հերոսների մասին հյուսվում են զանազան իրական ու չափազանցված պատմություններ: Ավանդույթների մի մասն էլ կապված է այդ շրջանում ստեղծված տեղանունների հետ, օրինակ Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղ կոչվող գյուղի մոտ է գտնվում Քոքսեն կեծանը: Այդ տեղանքը կոչված է ի պատիվ Քերոլայն Քոքսի, ով արցախյան ազատամարտի ամենաթեժ պահերին այցելել էր Արցախ: Հոռաթաղից պիտի գնար Վանք, սակայն տրանսպորտի բացակայության պատճառով գյուղացիներն արահետ են բացել և հետագայում այդ արահետը ժողովուրդն ի պատիվ Քերոլայն Քոքսի՝ կոչել է Քոքսեն կեծան[4]:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի քնարական բանահյուսության նմուշները՝ մասնավորապես չափածո ստեղծագործությունները, որտեղ արտացոլված են արցախցու բնապաշտական յուրօրինակ ընկալումները, լեռնցուն հատուկ կոշտությունն և միաժամանակ անսահման պարզամտությունը: Յուրաքանչյուր արցախցու ամենանվիրական երազանքը՝ մայր Հայաստանի հետ միացումն է: Այս իրողության անհրաժեշտությունը հավասարվում է սեփական առասպելի իրագործմանը: Եվ Արցախ-Հայստան պատմական ամբողջության մեջ կորստյան ցավը վերածվում է երանության, եթե ամարմինը հանգչելու է իրական հայրենիքում.

Մըէռնիմ վէչ հալա, մըչաք սաղ կէնամ,
Մայր Հայաստանին միացած տըէսնամ,
Յէտնան թող սըէրտըս կաղնէ առանց վախ,
Ինձ հողիտ հանձնին, իմ քախցըր Արցախ[5]:

Միասնությունը հարատևության երաշխիք է: Մեր պատմական ճակատագիրը փաստում է մեկ ճշմարտություն, համախմբվածությունն է այն առաջ մղիչ ուժը, որով ազգերը շարունակում են իրենց մշտակա երթը: Պատկերային համակարգով, գեղարվեստական մտածողությամբ, հետաքրքիր զարգացումներով կառուցված այս տողերում կրկին վեր է հանվում հայության այս հատվածի կենսափիլիսոփայությունը, գաղափարական հասունությունն ու ամուր ներուժը, հայրենասիրության ընկալումն իր տեսակին բնորոշ մտածողությամբ.

Ամեն հայ պիտի մին պան լ՝ավ գիդա,
Վար հաղթանակը ուրան հողնա բիդա,
Քէզ ում ասում ա՛ հայ, էք հողըտ խըտէ պէնդ,
Մընացալընք էրկու ճօխտ, մի կէնդ[6]:

Գիտակցական բարձր հորիզոնում կորցրածի արժորումից ծնվում է ողբերգությունը: Սակայն կամովին հաղթահարելու ցանկությունը երբեմն հնարավորություն է ընձեռնում վերստին պայքարելու և ունեցածը արժևորելու: Արցախցին կրկին խաղաղության մասին է երազում, նրա ստեղծագործ էությունը պայքարում է պատերազմների ու արյունահեղության դեմ.

---

[1] Տե՛ս՝ նույնը, էջ 134:
[2] Ռոբերթ Ալթունյան, 1970թ. գ. Մեծ թաղեր, շինարար:
[3] Արթուր Բալայան, 1960թ. ք. Մարտակերտ, զինծառայող:
[4] Ա.Սարգսյան,Արցախյան ավանդություններ, Ստեփանակերտ, 2007, էջ 42:
[5] Աշոտ Սարգսյան, «Իմ Արցախ» :
[6] Սպարտակ Օսիպյան, 1988թ., ք. Մարտակերտ, :

Մէր պարծանքը Մըռավըն ա ու մին էլ Քիրսն ա,
Օգում ընք դինջ ապրինքյ, կըռըէվը հինչրնէրէս ա՞,
Իլալ ընք մին հափուռ, կէս հափուռ ընք տըէռալ,
Իլյածը բիդի պահինքյ, շատ ընք կուրցըրալ[1]:

Երախտագիտության զգացումն այսօր նոր մարտահրավերներ հաղթահարելու գիտակցական ամուր ներուժ է հանդիսանում: Արժևորման շարունակական ընթացք, որ բացահայտում է արժանավայել կյանքի խորհուրդը: Անցյալն ու ներկան կրկին վերամիավորվում են, հուշերը վերածվում են փաստացի ճշմարտության: Միայն պարտքի զգացողությունն է անփոփոխ ու հարատև. «Մունք էնքան շունուրհակալ ընք մէր էն տըղօրցան, վէր կըռէվ ըն ըրալ սօրվա ազադ օրվա հէտէ, ուրանց ծընօղնէրէն վէզը թուղէլավ ծօռ»[2], «Տափան մինչէվ յէրգինք շունուրհակալ ում Ըստուծան, վէր նըմուսավ տըղէրք ա մէզ տուվալ»[3]: Արցախյան գոյապայքարը անջնջելի հետք է թողել յուրաքանչյուր արժանապատիվ հայի մտապատկերում: Այն ինքնաճանաչման յուրօրինակ ուղի էր, որտեղ ժողովուրդը վիրագտավ ինքն իրեն:

[1] Ա. Պետրոսյան, 2001թ. գ. Ավետարանոց, աշակերտուհի:
[2] Ժասմեն Մարտիրոսյան,1966թ, գ. Նորագյուղ, ուսուցչուհի:
[3] Զարինե Ավանեսյան, 1978թ, գ. Ուղտասար, գրադարանավար: